«Օժանդակեաց շինութեան տաճարիս հինգ հարիւր ռուբլի դրամոք Բագուաբնակ բարեպաշտ իշխան Պ. Գէորգ Յովհաննէսեան Քալանթարեանց, յամի Տեառն 1881»։

Տաճարիս շինութեան վերայ յիրաւի շատ ու շատ աշխատել էր Գեր. Նախորդս երկու անգամ Բագու գնալով և վիճակի քաղաքները և գիւղերը շրջելով՝ օժանդակութիւն ժողովելոյ շինութեան համար՝ յընթացս 9 ամաց (9671 ր. 13 կոպ.) ինն հազար վեց հարիւր եօթանասուն և մէկ ռուբլի և 13 կոպ. ըստ տօմարին շինութեան գումարելով և ծախսելով։

Բայց ինչպէս ծանօթացայ գործին և ստուգեցի, շինութեանս վերայ բաւական աշխատել են նա՝ և բարձր. Համազասպ վարդապետն Համազասպեանց և Սաղիանի Սահակ քահանայն, և մեր Պարոն Ատենադպիր Աբրահամբէկն, ինչպէս և մեր ժամանակը՝ շինութեան վերջին մասն և թերութիւնը լրացնելոյ պատճառաւ՝ ոչ սակաւ աշխատեցին յիշեալ քահանայն և ատենադպիրն, որոնց բացի բերանացի շնորհակալութիւնս յայտնելէն, ահա և հրապարակաւ յայտնեմ գրով գոհունակութիւնս։

Շինութեան թերութիւնը լրացնելոյ համար՝ ծախսեցաւ ըստ տօմարին (1633-մանէթ 80 կ.) հազար վեց հարիւր երեսուն երեք մանէթ և ութսուն կոպէկ, որոյ հազար մանէթն զանազան մարդկանցից և վանքական այգւոյ երկամեայ կապալաղրամովը լրացաւ, իսկ 633 մանէթն ու 80 կոպ. նուիրեցին Սաղիանցիք։ Մնացել է միայն տաճարի կաթուղիկէն շինելու, որոյ ծախսը՝ յուսով եմ, որ Բագուեցի բարեպաշտ ազգայինք չեն խնայել շնորհելու, որն եթէ Զամախւոյ Հայոց եկեղեցւոյ գմբէթի նման թեթեւութեան համար, շինուի փայտով և ժեշտով՝ ծախս կըլինի 5 կամ 600 ռուբլի։ [1])

Վերջապէս 'ի 5-ն հոկտեմբ. 1887 ամի № 65. յայտարարութեամբ դիմելով Վեհափառ Կաթուղիկոսին և յայտնելով տա-

---

[1]) Վանքի տաճարի գմբէթը շինուեց 1893 թուին (մայիս, յունիս, յուլիս) որոյ նկարագրութիւնը տե՛ս գրքիս 94 երեսում։